

Կուտակային ավանդներ

Արժույթ	Ավանդի նվազագույն գումար	Տարեկան տոկոսադրույք/Տարեկան տոկոսային եկամտաբերություն *	Ամսական համարման նվազագույն չափ	Ավանդի համարման վերջնաժամկետ (Ավանդի ժամկետի ավարտից առաջ)
91-180 օր ժամկետով				
AMD	10.000	5.00%	7.000	30 օր
USD	30	1.00%	15	
181-270 օր ժամկետով				
AMD	10.000	6.00%	5.000	30 օր
USD	30	2.00%	10	
271-365 օր ժամկետով				
AMD	10.000	7.50%	5.000	30 օր
USD	30	3.00%	10	
366-459 օր ժամկետով				
AMD	10.000	8.50%	5.000	30 օր
USD	30	4.00%	10	

Ավանդային պայմանագիր կնքող հաճախորդներին պլաստիկ քարտերի տրամադրման պայմաններ.

Արժույթ	MC Standard կամ Visa Classic	MC Gold կամ Visa Gold	MC Gold կամ Visa Gold, ինչպես նաև Diners Club Young Professional
ՀՀ դրամ	մինչև 10,000,000.00 սկզբնական ներդրվող գումար	10,000,001.00-ից մինչև 25,000,000.00 սկզբնական ներդրվող գումար	25,000,001.00 և ավելի սկզբնական ներդրվող գումար
ԱՄՆ դոլար	մինչև 20,000.00 սկզբնական ներդրվող գումար	20,001.00-ից մինչև 50,000.00 սկզբնական ներդրվող գումար	50,001.00 և ավելի սկզբնական ներդրվող գումար
Քարտերը տրամադրվում են առանց տարեկան սպասարկման վճարի և չնվազող մնացորդի սահմանման			

1. Հաշվարկված տոկոսները վճարվում են ժամկետի վերջում:
2. Կուտակված տոկոսագումարները չեն հաշվեգրվում ավանդի գումարին:
3. 80.000.000 ՀՀ դրամ և ավելի կամ համարժեք արտարժույթ և ավելի գումարով ավանդների ներգրավման դեպքում տոկոսադրույքները սահմանվում են պայմանագրային հիմունքներով:
4. Համալրումները կարող են կատարվել ցանկացած ժամանակ մինչև ավանդային պայմանագրի ժամկետի ավարտին նախորդող 30-րդ օրը:
5. Հաշվարկված տոկոսները վճարման պահին ենթակա են հարկման «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված չափով, ընդ որում ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն այս դեպքում հանդիսանում է հարկային գործակալ՝ եկամտահարկի գծով:
6. Պայմանագրով նախատեսված ժամկետից շուտ Ավանդատուի կողմից ավանդի գումարը կամ դրա մի մասը ետ պահանջելու դեպքում, Բանկը հաշվարկում է տարեկան 0.1%:
7. Ավանդատուին տրամադրվում է բանկային գրքույկ՝ անվճար:
8. Կուտակային ավանդի նկատմամբ տոկոսագումարները հաշվարկվում են անվանական (պարզ) տոկոսադրույքի հիման վրա: Տարեկան տոկոսային եկամտաբերությունը ցույց է տալիս, թե որքան եկամուտ կստանայիք, եթե ձեր ավանդի դիմաց ստացված տոկոսագումարները վերաներդնեիք ավանդի տեսքով՝

ՀԵՏԵՎՅԱԼ ԲԱՆԱԶԵՎՈՎ:

- որտեղ՝
1) APY - տարեկան տոկոսային եկամտաբերությունն է:

- 2) **r** - տարեկան պարզ տոկոսադրույքն է:
- 3) **n** - մեկ տարվա ընթացքում տոկոսագումարների կապիտալացման հաճախականությունն է:

ՕՐԻՆԱԿ՝ «Կուտակային ավանդ՝ տոկոսագումարների ամսական կապիտալացմամբ».

- 1) Ենթադրենք առաջարկվում է ավանդատեսակ հետևյալ պայմաններով՝
 - ա. Ավանդի գործողության ժամկետ՝ 12 ամիս
 - բ. Տարեկան պարզ տոկոսադրույք՝ 7,50%
 - գ.Տոկոսների կապիտալացումների հաճախականությունը վերջում՝ տարվա ընթացքում 1 անգամ:

APY=(1+0.0775/1)¹-1, APY=0.0750*100=7.50%

***Ուշադրություն.** Համաձայն կանոնակարգ 8.02. Գլուխ 3 4-րդ կետի 4-րդ ենթակետի, այն է «Այն դեպքերում, երբ տվյալ ավանդատեսակի գծով սահմանվում է ավանդի գումարի ավելացման (նվազեցման) հնարավորություն, սակայն չի սահմանվում ավանդի գումարի ավելացման (նվազեցման) չափ, ապա ենթադրվում է, որ ավանդի գումարը մնալու է անփոփոխ մինչև տվյալ ավանդատեսակով նախատեսված ժամկետի գործողության ավարտը», ելնելով վերոգրյալից՝ կուտակային ավանդի դեպքում տոկոսային եկամտաբերությունը համարժեք կլինի տարեկան պարզ տոկոսադրույքին:

Հաշվարկված տոկոսները վճարման պահին ենթակա են հարկման «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված չափով, ընդ որում՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն այս դեպքում հանդիսանում է հարկային գործակալ՝ եկամտահարկի գծով:

ՈՒՇԱՂՈՒԹՅՈՒՆ. ԱՐԱՐԱՏԲԱՆԿՈՒՄ ներդրված ավանդները երաշխավորված են **«Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի»** կողմից: Երաշխավորվում են ֆիզիկական անձանց, այդ թվում անհատ ձեռնարկատերերի ինչպես դրամային, այնպես էլ արտարժույթային ավանդները (հաշիվները): Դրամային ավանդների համար երաշխավորման առավելագույն չափը 10 միլիոն ՀՀ դրամ է, իսկ արտարժույթային ավանդների համար՝ 5 միլիոն ՀՀ դրամ: Ավանդատուից ոչ մի գործողություն չի պահանջվում իր ավանդը երաշխավորելու համար: Ավանդ դնելու պահից այն համարվում է երաշխավորված:

Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկ	
Տարեկան փաստացի տոկոսադրույքը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.	$A = \sum_{n=1}^N \frac{K_n}{(1+i)^{\frac{D_n}{365}}}$
i	Տարեկան փաստացի տոկոսադրույքն է, որը վարկառուի ընդհանուր ծախսն է, արտահայտված տրամադրված վարկի տարեկան տոկոսով, և որն իր մեջ պարունակում է բոլոր տոկոսներն ու այլ վճարումները, որոնք սպառողը պարտավոր է վճարել վարկի ստացման, ինչպես նաև դրա գործողության ողջ ընթացքում
A	Սպառողին տրամադրվող վարկի սկզբնական գումարն է
n	Վարկի մարմանն ուղղված վճարի թիվն է
N	Վարկի մարմանն ուղղված վերջին վճարի թիվը
Kn	Վարկի մարմանն ուղղված n-րդ վճարի գումարը
Dn	Վարկի տրամադրման օրից մինչև վարկի մարմանն ուղղված n-րդ վճարի կատարման օրը ընկած ժամանակահատվածը՝ արտահայտված օրերի թվով

Վարկի հաշվարկման օրինակ.

- Գուտակային ավանդ – 500,000 դրամ, տարեկան 13% տոկոսադրույքով,
- Վարկի գումար - 450,000(500,000×90%) ՀՀ դրամ,
- Վարկի տարեկան տոկոսադրույք - 16%(13%+3%),
- Վարկի ժամկետ - 12 ամիս,
- Տարեկան փաստացի տոկոսադրույքը կկազմի 15,99%:

Քերված հաշվարկի օրինակը կրում է պայմանական բնույթ:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՁԵՐ ՀԱՇՎՈՒՄ ԱՌԿԱ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒԹՅՈՒՆԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ: ԻՄԿ ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՍՏԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԵԿԱՍՈՒՏ ԿՍՏԱՆԱՅԻՔ ԴՈՒՔ, ԵԹԵ ՁԵՐ ԱՎԱՆԴԻ ԴԻՄԱՑ ՍՏԱՑՎԱԾ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՎԵՐԱՆԵՐԴՆԵՒՔ ԱՎԱՆԴԻ ՏԵՍՔՈՎ:

Հաշվից քաղցվածները տրամադրվում են հետևյալ պայմաններով.

Հաշվից (այդ թվում ավանդային հաշվից) քաղվածքների, վճարային փաստաթղթերի կրկնօրինակների, այլ տեղեկությունների տրամադրում (ըստ հաճախորդի պահանջի, յուրաքանչյուր փաստաթղթի համար)	
Մինչև 1 ամիս վաղեմության	500 ՀՀ դրամ*
1 ամսից մինչև 6 ամիս վաղեմության	1,500 ՀՀ դրամ*
6 ամսից մինչև 1 տարի վաղեմության	2,000 ՀՀ դրամ*
1 տարուց մինչև 2 տարի վաղեմության	3,000 ՀՀ դրամ*
2 տարուց ավելի վաղեմության	5,000 ՀՀ դրամ*

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ավանդների հատուցման երաշխավորող է հանդիսանում **Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամը**՝ «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն:

Օրենքով սահմանված են ավանդների երաշխավորման հետևյալ չափերը.

- միայն ՀՀ դրամով ավանդի առկայության դեպքում երաշխավորված ավանդի չափը կազմում է 10.0 մլն ՀՀ դրամ,
- միայն արտարժույթային ավանդի առկայության դեպքում ավանդը երաշխավորվում է 5.0 մլն ՀՀ դրամի չափով,
- եթե ավանդատուն ունի դրամային և արտարժույթային ավանդներ, և դրամային ավանդի գումարը 5.0 մլն ՀՀ դրամից ավելի է, երաշխավորվում է միայն դրամային ավանդը՝ մինչև 10.0 մլն ՀՀ դրամի չափով,
- եթե դրամային ավանդը պակաս է 5.0 մլն ՀՀ դրամից, երաշխավորվում են դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժույթային ավանդը՝ 5.0 մլն դրամի և հատուցված դրամային ավանդի տարբերության չափով: